№ 124 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՑՈՒԼԻՍԻ 16 **1898** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՑՈՒԼԻՍԻ 16 № 124

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹՒԻ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«Մշակի» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 բուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., մի ամսվանը 1 բուբլի։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բազարնայա և Բարօնսկայա փողոցն. անկիւն)։ Ուրիշ քաղաքներից պէտք է դիմել այս հասցէով. ТИФЛИСЪ, редакція «Мшакъ», *իսկ արտասահմանից՝* TIFLIS, Rédaction du journal arménien «Mschak».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հաշտութեան նշաններ. Նոր հարկը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խմբագրութիւնից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմ. Արտաքին լուրեր.—ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պատերազմի շուրջը։

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Բոլգարական իշխանի նոր ճանապարհորդութիւնը դէպի Պետերբուրգ, սիրալիր ընդունելութիւնը, Թագաւոր Կայսրի արտասանած խօսքերը, և Ֆերդինանդ իշխանի յուզված պատասխանը՝ նոր նշաններ են, որ Բոլգարիայի և Ռուսաստանի մէջ հաստատվում է քաղաքական սերտ բարեկամութիւն։ Այդ բարեկամութիւնը առանձին կարևորութիւն է ստանում, երբ յիշելու լինենք այն երկարատև և բուռն թշնամութիւնը, որ 80-ական թուականներին ծագեց և միանգամայն խզեց երկու երկիրների յարաբերութիւնները, երբ Բոլգարիայում հայրենասիրութիւն էր համարվում հարուածել այն բոլորը, ինչ որ կապված էր Բոլգարիայի քաղաքական կեանքի և ձգտումների հետ...

Դա կատարելապէս անբնական երևոյթ էր։ Սլավոն ցեղին պատկանող երկու ազգերի այդ թշնամութիւնը հետևանք չէր պատմական խոշոր փաստերի, այլ քաղաքական անցողական ընդհարումների, և այդ է պատճառը, որ փոխադարձ հաշտութեան գաղափարը խոր արձագանք գտաւ թէ Ռուսաստանի և թէ Բոլգարիայի մէջ։ Այսօր այդ հաշտութիւնը կայացած պէտք է համարել։ Եւ դա, մեր կարծիքով, ամենալաւ յարգանքն է, որ 20 տարի անցնելուց յետոյ մատուցանվում է Ալէքսանդր II Կայսրի անմոռանալի յիշատակին, որի ազատասէր ոգին այժ տուեց փշրելու բոլգարական ստրկութեան շղթան՝ հիմնելով մի նոր, ազատ պետութիւն այն վայրերում, ուր անդադար հոսում էր արիւն և արտասուք...

Հեռագիրը լուր բերեց, որ Բումինիայի թագաւորը և թագաժառանգը նոյնպէս ուղևորվեցին Պետերբուրգ։ Քաղցր է մեզ յուսալ, որ Բալկանեան երկու հարևան պետութիւնների թագաւորների ներկայութիւնը Ռուսաստանի մայրաքաղաքում առիթ կը տայ թուլացնելու այն թշնամութիւնը, որով ներշնչված են Բոլգարիան և Բումինիան, թշնամութիւն, որ չէ թոյլ տալիս երկու եղբայր-ազգերին միանալու և միացած այժերով առաջ տանելու Բալկանեան թերակղզու մեծ դատը։ Բալկանի փոքրիկ ազգերի այդ ներքին թշնամութիւնը այժ է տալիս ընդհանուր թշնամուն. օգտվելով դրանից՝ նա անդադար ինտրիգներ է լարում, վնասելով ամբողջ երկրի խաղաղ զարգացման։

Այդ հանգամանքը Ռուսաստանի առաջ դնում է քաղաքական մի նոր խնդիր. Բալկանի փոքրիկ պետութիւնների հաշտութեան խնդիրը։ Ռուսաստանին է պատկանում Բալկանեան փոքրիկ ազգերի ազատութեան պատուի խոշոր մասը. ցանկալի է որ նոյն Ռուսաստանին պատկանի այդ փոքրիկ պետութիւնների փոխադարձ հաշտութեան գործի նախաձեռնութիւնը։ Եթէ աջողվի այդ գեղեցիկ գործը, Բալկանը կը մտնի իր զարգացման և կատարեալ անկախութեան նորագոյն շրջանը։

ՆՈՐ ՀԱՐԿԸ

Պաշտօնապէս հրատարակվեց նոր հարկի օրէնքը։ Այդ հարկից դանձարանը ըստ պասում է տարեկան մինչև 12 միլիոն բուբլի մուտք։ Հարկը պէտք է ծանրանայ մարդկանց պարապմունքի և արհեստի վրա, այդ պատճառով նա կոչվում է պարապմունքի հարկ (промысловый налогъ)։ Տուրքի չափը կախված է ձեռնարկութեան մեծութիւնից։ Որքան շատ է եկամուտը և ընդարձակ է ձեռնարկութիւնը, այնքան էլ բարձր է հաշված տուրքը։ Սկզբունքի տեսակէտից նոր հարկը խելացի է կարգադրված. նա համապատասխան է եկամուտին և ուրեմն ծանրանում է առաւելապէս ունևոր դասակարգի վրա։

Նոր հարկին պէտք է ենթարկվեն առևտրական և արդիւնագործական ձեռնարկութիւնները, կրեդիտային և ապահովագրական հիմնարկութիւնները, գործարանները, արհեստանոցները, կապալները և մի քանի պաշտօններ, օրինակ բանկերի խորհրդի և վերատուգող յանձնաժողովի, նոյնպէս բօրսայի միջնորդի, առևտրական գործակալների, նոտարների և ուրիշ այդ տեսակ պաշտօնները։ Իսկ բացառութիւն պէտք է կազմեն բարեգործական, գիտական, կրթական հաստատութիւնները, թատրօնական ներկայացումները, մշակների ընկերակցութիւնները, արքունական ձեռնարկութիւնների մեծ մասը և մի քանի այնպիսի հիմնարկութիւններ և արդիւնագործութիւններ, որոնց տրված կը լինի ժամանակաւոր արտօնութիւն, որպէս զի նրանք կարողանան բարգաւաճել և զարգանալ պետութեան մէջ։

Թէ մայրաքաղաքի և թէ գաւառական մամուլի օրգանները նուիրեցին մի շարք յօդուածներ ներկայ հարցի քննութեան։ Ընդունելով, որ հարկը հիմված է արդար սկզբունքի վրա, քննադատները գտնում են մի շարք դժուար լուծելի խնդիրներ գործադրութեան տեսակէտից։ Օրինակ, նոր օրէնքով իւրաքանչիւր ձեռնարկութիւնից պէտք է վերցնվի ամեն մի հարիւր բուբլի հիմնադրամից 15 կոպէկ. բայց որոշել ճիշդ կերպով հիմնադրամը այնքան հեշտ չէ, ինչպէս երևում է գործի վրա հեռուից խօսած ժամանակ։ Բացի դրանից, պետութեան զանազան տեղերը միատեսակ օգուտ չեն ստանում իրանց ձեռնարկութիւններից. մի տեղ նա շատ նշանաւոր գումարի է հասնում, միւս տեղ նա չնչին է։ Ճիշդ է, մինիստրութիւնը պէտք է բաժանի տուրքը ութ դասակարգի, սակայն այդ դասակարգեր սահմանելը պահանջում է լուրջ աշխատանք և մեծ զգուշութիւն։

Անկասկած, ամեն մի հարկ ներկայանում է իբրև մի նոր ծանրութիւն. սակայն աչքի առաջ ունենալով, որ անհրաժեշտութիւնը ստիպում է մտցնել նոր հարկեր, մխիթարական պէտք է համարել այն, որ նոր հարկերը հաստատված են խելացի հիմունքների վրա և ձգտում են հարկի մեծ մասը դցել այն անձանց վրա, որոնք աւելի ապահովված են նիւթապէս։ Իսկ մինչև այժմ տիրապետում էր բոլորովին ուրիշ սկզբունք, որի համաձայն տուրքերը վճարում էր հասարակ աշխատող դասակարգը, դառնալով պետական բիւջէի գլխաւոր պահպանող այժը։ Ժամանակ է, որ այն դասակարգերը, որոնք աւելի են օգտվում կեանքի բարիքներից, հարստութիւններից, աւելի մեծ չափով վերցնեն իրանց վրա պետութեան համար անհրաժեշտ ծախքերի ծանրութիւնը։ Դա արդարութեան տարրական պահանջն է։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Երէկ գիշեր, ժամը 11-ին, տպարանի ծառայողների անհոգութեան պատճառով, «Մշակի» երկու ամբողջ երեսը՝ արդէն պատրաստ և ցէնզորից թոյլատրված, թափվեց։ Այդ պատճառով հաղիւ կարող եղանք այսօր կէս թերթ հրատարակել։ Ներողութիւն խնդրելով բաժանորդներից՝ խմբագրութիւնը ամեն միջոց գործ կը դնի՝ որպէս զի այդ անկարգութիւնը ապագայում այլ ևս չը կրկնվի։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Քաղուածք սպանիայի մինիստրուհու նամակից)

«...Երբ մինիստրները, իրանց գործունէութեան ժամանակ, բարձրից չեն նայում ամբոխի վրա, այլ ընդհակառակը սէր են ցոյց տալիս նրան և հետևում են աւետարանի ոգուն, այն ժամանակ ոչ միայն չեն աքսորվի երկրից, այլ մինչև անգամ պաշտպանութիւն կը գտնեն։ Ես հաստատ համոզված եմ, որ եթէ ամերիկացիները կամ կարլիստները յարձակվեն Ֆիգուէրասի վրա, այդ քաղաքի բնակիչները իրանց բոլոր զօրութիւնով կը պաշտպանեն մեզ։ Սպանիական ժողովրդի բոլոր դասակարգերը խոր համոզված են, որ Ֆիլիպինեան կղզիների և Կուբայի ժողովուրդը սարսափելի կերպով ճնշված են և մենք արժանի ենք դրանցից զրկվելու։ Բայց ի պատիւ սպանիացիների պէտք է ասել, որ նրանք երբէք վրէժխնդիր հոգով չեն խօսում իրանց թշնամիների մասին։ Ամենքն էլ փափագելով փափագում են խաղաղութիւն։ Մեր բոլոր հոգևոր ժողովներում ջերմ աղօթքներ են բարձրանում այն ամուսինների, որդիների և եղբայրների համար, որոնք պատերազմի դաշտում, կամ ծովի վրա վտանգի մէջ են և կամ ոչ պակաս սարսափելի թշնամի՝ հիւանդութեան ենթակայ։ Մենք սրտանց կարեկցում ենք այդ վիճակի մէջ եղողներին, մանաւանդ որ մեր պատօրի կրտսեր եղբայրը և եղբօրորդին էլ մասնակցում են Սանտ-Եագօ դէ Կուբայի պաշտպանութեանը։ Եղբօրորդին, որ կանուխ որբացած էր, եօթը տարեկան հասակից ի վեր մեզ մօտ էր և ամենքս էլ սիրում էինք նրան մեր որդու պէս։ Ոհ, թէ Տէրը պատերազմի օրը իր զօրաւոր բազուկով պաշտպանէր նրանց մատաղ գլուխները։

Ցաւալի տեսարան. համարեա թէ իւրաքանչիւր ընտանիք կողոպտված է և երկիւղի հոգեւորով ծանրացած։ Համարեա իւրաքանչիւր տան մէջ կը հանդիպէք ծնողների արտասուալից աչքերին, աչքեր, որոնք ուղղված են թանգագին որդու պատկերին, որ պատերազմը խլեց նրանցից։ Լուսանկարը գեղեցիկ շրջանակի մէջ դրված ու ծաղիկներով շրջապատված է։ Սա է մնացել նրանց սիրեցեալ կեանքից։—Սէրը ընտանիքի անդամների մէջ շատ մեծ է Սպանիայում։ Աշխատանքի տներ այստեղ աւելորդ են, որովհետև ծեր մարդիկ ընակվում են իրանց որդոց մօտ, թէև շատ անգամ ապրուստը չքաւոր է լինում։ Երբ մտնում ես սպանիական մի տուն և փափագում ես ջահիլներին քաջալերութիւն ցոյց տալ, ապա դրա ամենալաւ կերպը՝ նրանց մեծ հօր կամ մեծ մօր վրա արժանաւոր ուշադրութիւն դարձնելը կը լինի։ Կարիք չը կայ երեխաների պաշտպանութեան ընկերութիւն հիմնել։ Որքան էլ մի երեխայ չքաւոր ու հասարակ լինի, մինչև անգամ օտար, մարդիկ նրանց մօտ կանգ են առնում, ժպտում և զուարճանում նրանցով։ Ամբողջ Սպանիայում ամենալաւ մաղթանքը, որ մէկին կարող էք անել՝ «ապրի մայրդ» խօսքն է։ Վայ նրան, ով ամենափոքր վիրաւորանք կը հասցնի մէկի մօր անունին։ Սպանիացու բնաւորութեան մէջ շատ ազնիւ գծեր կան և մեր լուրջ փափագն է, որ այդ ժողովուրդը լուսաւորվի և ճանաչի ճշմարտութիւնը։

Սպանիայի պատմութեան այս ցաւալի տագնապի միջոցին, նրա կործանման պատճառը գտնելու համար, պէտք է յետ դառնալ դէպի այն ժամանակը, երբ Սպանիան ազգերի մէջ առաջնակարգ դիրք գրաւեց և ապա հետևել պատմութեանը մինչև ներկայ ժամանակը։ 1502 թուականը ամենախաւար և ամենասարսափելին էր, որ երբ և է ունեցել է գեղեցիկ Սպանիան։ Այդ տարին էր, որ հիմնվեց և հաստատվեց կաթոլիկ միութիւնը։ Միութիւնը առաջ բերեց անէծքի արժանի ինկվիզիցիա, և դրանով գերեզման մտաւ երկրի ծաղկելու գործը։ Մաւրիտանացիների և հրէաների հետ միասին արտաքսվեցին երկրից գիտութիւնը, գեղարուեստը, առևտուրը և արուեստները, և այն ամենը, ինչ որ ծառայում էր երկրի զարգացման։ Վանքերի և աբբայարանների հիմնելը, կղերի չամուսնանալը և ինկվիզիցիայի տանջանքները՝ կիսով պակասեցրին ազգաբնակութեան թիւը։ Երկրի արդիւնագործութիւնը դադարեց, գիտութեան ձայնը լռեց և դրա տեղ սկսեցին հնչել եկեղեցիների զանգակների ձայները։ Գիւղական ուրախ տօներին փոխարինեցին հանդիսաւոր թափօրները և աուտօդաֆէները։ Սարսուռ տիրեց ամբողջ երկրի վրա. չքացաւ երկրի գեղեցկութիւնը, պատիւը և բաղդը։

Կառավարութեան տկար լինելու, առևտրի և լուսաւորութեան ընկած լինելու պատճառը՝ ժողովուրդը չէ։ Կղերական տարրը թափանցել է և կործանել ամբողջ կառավարչական մարմինը։ Ուղիղ է ասում մի անգլիական լրագիր—«Սպանիացիները ընդհանրապէս խիստ զարգացած պատուի զգացմունք ունեն, բայց այնքան վատ են կառավարում նրանց, որ ոչ մի պետական անձ չէ կորցնում իր համարումը, երբ կողոպտում է կառավարութեանը։ «Պապականութեան կործանիչ ազդեցութիւնը ծծեց երկրի կենսական զօրութիւնը և զրկեց նրան՝ իր փառաւոր կոլոնիաներից։

«Հոգևորականների տիրապետութիւնն է Սպանիայի կործանման գլխաւոր պատճառը։ Այս խօսքերը բողոքականների խօսքերը չեն, այլ մի առաջնակարգ դիրք ունեցող անձի՝ Պենա-Գլանտայի մարկիզ մարշալ Բլանկօյի, Ֆիլիպինեան կղզիների նախկին նահանգապետի խօս-

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ռուսաց արտաքին գործերի մինիստրության պաշտօնական օրգան «Journal de St. Petersbourg» լրագրի մէջ տպված է հետևեալը բոլգարական իշխանական զոյգի այցելության առիթով. «Նոցա արքայական բարձրութիւններ բոլգարական իշխանը և իշխանուհին հիւր կը գան հինգշաբթի Պետերհոֆ Նոցա Կայսերական Մեծութիւնների մօտ։ Ողջունում ենք լուսաւորված իշխանին, որ անշեղ կերպով ձգտում է ապահովել այն երկրի բարեկեցութիւնը, որի հետ Ռուսաստանը կապված է այնպիսի սերտ կապերով։ Նոյնչափ սրտագին ողջունում ենք մենք և օգոստափառ իշխանուհուն, որը իր վեհ յատկութիւններով գրաւել է ընդհանուր յարգանք։ Մենք շատ ուրախ ենք տեսնել մեր շրջանում նոցա բարձրութիւններին ընկերացող Նորին Կայսերական Մեծութեան սանիկ՝ մատաղ իշխան Բորիսին, որի ուղղափառութիւն ընդունելը, որ կատարվեց նշանաւոր հանգամանքներում, ստեղծեց դարձեալ մի նոր կապ Ռուսաստանի և բոլգարական ժողովրդի մէջ»։

—

«Новости» լրագիրը հաղորդում է, որ ռուս նշանաւոր հոգևորական Իօանն Կրոնշտադտկի, հիւսիսում իր ճանապարհորդութիւնը վերջացնելուց յետոյ, պէտք է ուղևորվի Վրաստան։

—

Մինչև երէկ, յուլիսի 15-ը, Թիֆլիս քաղաքի փողոցներ մաքրելը կազմում էր քաղաքային վարչութեան պարտաւորութիւնը։ Այսուհետև այդ պարտաւորութիւնը անցնում է տանտէրերին և վերջիններս պէտք է ամեն օր իրանց ժակների միջոցով մաքրեն իրանց տան առաջը։ Այսօրվանից սկսած ոստիկանութիւնը կը սկսի պահանջել, որ տանտէրերը իրանց պարտաւորութիւնը ճշդութեամբ կատարեն։

—

Յուլիսի 10-ին Մոսկվայում վերջացաւ գործակատարների և մանաւոր ծառայողների համառուսական ժողովը։ Նախկին նիստերի արձանագրութիւնները և որոշումները հաստատելուց յետոյ, ժողովը կայացրեց հետևեալ որոշումները. 1) տպագրել ժողովի զեկուցումները և աշխատութիւնները 1000-ական օրինակ և 2) հետևեալ համառուսական ժողովը նշանակել դարձեալ Մոսկվայում, երկու տարուց յետոյ, ամառվայ ամիսներում և շնորհակալութիւն յայտնել ներքին գործերի մինիստրին, որ թոյլատրեց ներկայ ժողովը։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց բժիշկ Կ. Աղամեանի «Contribution a l'étude des troubles trophiques dans l'hémiplégie organique» աշխատութիւնը, որ նա հրատարակել է ներկայ 1898 թուականին Պարիզում, գիտական աստիճան ստանալու համար։

—

«С. Петербургскія Вѣдомости» լրագիրը լսել է, որ կառավարութիւնը մտադիր է գանձարանից 28 միլիոն բուբլի գումար տալ այն նահանգներին, որտեղ անցեալ տարվայ անբերրիութեան պատճառով հողերը մնացել են անմշակ։ Այդ գումարը կը տրվի փոխարինաբար, սերմացու հացահատիկներ գնելու համար։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ օգոստոսի սկզբին Թիֆլիս պէտք է գան Մոսկվայի համալսարանի երկու պրոֆէսորներ՝ Կ. Կոժևնիկով և Ի. Կաբլուկով, ներկայ լինելու մեղուաբուծական ժողովին, որ տեղի պէտք է ունենայ Թիֆլիսում, այդ ժամանակ։ «Մեղուաբուծական ռուսաց ընկերութիւնը» ուղարկել է իր գլխաւոր քարտուղար Ն. Շավրովին 100 արծաթեայ ժետոններ՝ բաժանելու ժողովի անդամներին, և խոստացել է դարձեալ ուղարկել 100 ժետոն, եթէ հարկաւոր դատվի։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 12-ին պոլիցիան հրաւիրեց հայոց ծխական փակված դպրոցների հոգաբարձութիւններին՝ առաջարկելով յանձնել դպրոցի շինութիւնները և գոյքը։ Ի միջի այլոց պոլիցիան պահանջել է նաև ս. Յովհաննէս և Կաթուղիկէ եկեղեցիների երէցփոխներից նոյն բանը։ Այժմ բացատրվում է, որ այդ երկու եկեղեցիների բակերում եղող դպրոցները ոչ թէ ծխական էին, այլ թեմական դպրոցի ճիւղերը, որոնք մի կողմից տեղ չը լինելու պատճառով, միւս կողմից զանազան թաղերի երեխաներին յարմարութիւն տալու նպատակով, տեղաւորվել էին այդ երկու եկեղեցիների գաւիթներում։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

—

Սանտ-Եագօի վրա ծածանվում է ամերիկական դրօշակը։ Քաղաքի յանձնելը ամերիկացիներին շատ յուզիչ էր և ներկայ եղողներից շատերը արտասվում էին։ Գենեռալ Տօրալ, որ փոխարինում էր գենեռալ Լիներէսին Սանտ-Եագօի զօրքերի հրամանատարի պաշտօնում, բացականչեց. «ճակատագիրը կամեցաւ, որ Սանտ-Եագօն ես յանձնեմ»։ Գենեռալ Շաֆտէր պատասխանեց. «Միացեալ Նահանգների անունից ես ընդունում եմ այս քաղաքը ձեր ձեռքից»։ Այդ րօպէին բարձրացրին ամերիկական դրօշակը և մայր եկեղեցու զանգակը զարկեց տասներկու ժամը։ Ամերիկացիների հրճուանքը չէ կարելի նկարագրել։ Նրանք պարում էին ուրախութիւնից և նրանց ոգևորված աղաղակներին, կարծես, վերջ չը պիտի լինէր։

Սանտ-Եագօն գրաւելուց յետոյ ամերիկացիները տեսան թէ ինչ սարսափելի աւերումներ են գործել իրանց ծովային թնդանօթները։ Անհնարելի են մանաւանդ դինամիտային այն ռումբերի աւերումները, որ արձակում էր «Վեզուվ» նաւը։ Ամերիկացիները վարչական կարգեր մտցրին Սանտ-Եագօի մէջ։ Ազգաբնակութեան ուղղած մի յայտարարութեան մէջ ամերիկական կառավարութիւնը յայտնում է, որ ընակիչների անձնական և կալուածական ապահովութիւնը ամերիկական իշխանութիւնների հոգածութեան առարկան կը դառնայ։

Վաշինգտոնում վճռել են շարունակել պատերազմը եռանդով։ Արդէն 25,000 զօրք պատրաստ է Պօրտօ-Ռիկօ կղզու դէմ գործելու. Վատսոնի նաւատորմը, որ պիտի ռմբակոծէ Սպանիայի ափերը, շուտով ճանապարհ կընկնի։ Բայց սպանիացիները անհոգ են. նրանք ասում են թէ ամերիկական զրահակիր նաւերը, երկար ժամանակ մնալով արևադարձային ջրերում, այժմ պէտք է որ վնասված լինեն։ Սպանիական անհոգութեան վրա աւելանում է և մարշալ Բլանկօի յամառութիւնը. նա Հաւանայից անդադար հեռագիրներ է ուղարկում Մադրիդ, պնդելով թէ չը պէտք է հաշտութիւն կնքել, թէ Կուբայի կանոնաւոր և կամաւոր զօրքը կուելու վառ ցանկութիւն ունի։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կանէից հաղորդում են, որ այս օրերս այդտեղ հասան թիւրքաց նաւերով 50 թիւրք զինուորներ, որոնք ուղարկված են փոխարինելու իրանց ծառայութեան ժամանակը լրացրած զինուորներին, բայց եւրօպական ծովակալները թոյլ չը տուին նրանց ափ իջնել։

—«Siècle» լրագիրը հաստատում է, որ նորերս Բրիւսէլում տրված մի ճաշի ժամանակ Օրլէանեան դքսուհին ասաց, թէ այն յամառութիւնը, որով հանրապետական կառավարութիւնը աքսորի մէջ է պահում Դրէյֆուսին, որին դանիական և աւստրիական արքունիքները անմեղ են համարում, ստուեր է գցում Ֆրանսիայի բարի համբաւի վրա։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսից հաղորդում են գերմանական լրագիրներին, որ թիւրքաց մայրաքաղաքում կրետական հարցի վերջին ֆազիսի առիթով տիրում է պատերազմական տրամադրութիւն։ Թիւրքաց լրագիրները արդէն մի ամբողջ շաբաթ է տպագրում են առաջնորդող յօդուածներ այնպիսի ոգով, որ գրեթէ հաւասար է սրբազան պատերազմի յայտարարութեան անհաւատների դէմ։ Ահա մի օրինակ այդ յօդուածներից. «Ամբողջ Եւրօպան դաւադրութիւն է կազմել Թիւրքիայի դէմ և ոտնակոխ է անում սուլթանի ու մահմեդականների բոլոր իրաւունքները։ Այն մեծահոգութիւնը, որ դրդեց սուլթանին դուրս հանել Թեսալիայից իր զօրքերը, ի նկատի ունենալով մեծ պետութիւնների խնդիրքը, աւելի սաստկացրեց քրիստոնեայ Եւրօպայի յանդգնութիւնը։ Այժմ Թիւրքիայից պահանջում են, որ Կրետէն յանձնվի քրիստոնեայ ապստամբների և ոճրագործների ձեռքը, իսկ մի մեծ պետութիւն պահանջում է, որ սուլթանը թոյլ տայ մի քանի հազար հայ յեղափոխականներին, որոնք փախել են Թիւրքիայից պատժի երկիւղից, վերադառնալու տուն, իբրև մեծ պետութիւնների հովանաւորեալներ, որպէս զի յեղափոխութեան նոր տարը հանդիսանան... Միւս պետութիւնները ուղարկում են իրանց դործակալներին Մակեդոնիա և Ալբանիա՝ անկարգութիւններ սերմանելու, և երբ Բ. Դուռը աշխատում է պատասխանատուութեան ենթարկել յանցաւորներին, օտար պետութիւնները թոյլ չեն տալիս։ Իրերի այդ վիճակը ստորացնող է օսմանների համար և չէ կարելի այլ ևս տանել։ Այդ պատճառով սուլթանը վերջին պահանջին՝ Կրետէի վերաբերմամբ՝ պատասխանեց վճռական «ոչ»-ով և եթէ Եւրօպան ուշադրութիւն չը դարձնի դրա վրա, մահմեդականները խիստ պատասխան կը տան։»

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԱՄԵՐԻԿՈ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

ՊԱՐԻԶ, 15 յուլիսի։ Կապ-Հայտիից հաղորդում են, թէ Կայսմամէրայի և Գվանտանամօի բերդապահ զօրքերը անձնատուր եղան։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 15 յուլիսի։ Հեռագրում են, որ ամէրիկական զօրքերը սկսեցին Պակօում ափ իջնել Պօրտօ-Ռիկօ կղզու վրա։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յուլիսի։ Յուլիսի 14-ին, երեկոյեան 6 ժամին, Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնա յունաց թագուհու հետ ժամանեցին Պետերհոֆից Կրասնոե-Սելօ։

ԳՐԱՆԻՑԱ, 15 յուլիսի։ Յուլիսի 14-ին, առաւօտեան 8 ժամին, Դրանիցա կայարանը հասաւ բումինական թագաւորը թագաժառանգ պրինցի հետ միասին։ Դիմաւորեցին իշխանութիւնները։ 40 բօպէ կանգ առնելուց յետոյ, գընացքը ճանապարհ ընկաւ Վարշավա՝ բումինական օրհներգի ուղեկցութեամբ։

ՎԱՐՇԱՎԱ, 15 յուլիսի։ Յուլիսի 14-ին, ցերեկվայ 2 ժամ 53 բօպէին բումինական թագաւորի գնացքը հասաւ կայարան. ընդունելութիւնը հանդիսաւոր էր։ Ճանապարհ է ընկնելու Պետերբուրգ չորեքշաբթի առաւօտեան։

ՊԱՐԻԶ, 15 յուլիսի։ Լաբօրի յանձնեց դատաստանական քննիչ Բէյրտիլոնին, Պիկարի անունից, մի դանդատ մայոր Դիւ-Պատիդէ-Կլամի դէմ, մեղադրելով նրան զեղծումներ գործելու մէջ կամ զեղծումներին մասնակից լինելու համար։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

ՇՈՒՇԻ. Զ. Յօդուածը չի տպագրվի։

ԹԻՖԼԻՍ. Բ. Ներսէսեանց։ Արձանագրեցինք ձեր դիմումին՝ Վանքի միաբան Ղ. ք. Խ. հաւաքել և ուղարկել է մեզ 3 բուբլի, ձեր որբերի օգտին։ Մտէք խմբագրատուն և ստացէք։

ՊԱՐԻԶ. Ց. Շաւարշ։ Ձեր հերքումը չի տպագրվի լոկ այն պատճառով, որ առիթ տուող դէպքը ինքն ըստ ինքեան ուշադրութեան արժանի բան չէ։

ԷՋՄԻԱԾԻՆ. Կարապետ վարդապետ։ Դուք երևի գիտէք, որ «Մշակը» ոչ ոքի չէ զրկում պաշտպանվելու իրաւունքից։ Սակայն ձեր հերքումը չենք կարող տպագրել մի շատ անտաղելի պատճառով,—ձեր պատասխանը գրել էք ինչ որ շաբաթաթուն թանաքով, այնպէս որ թերթերը միմեանցից չեն բաժանվում, և կարդալու ոչ մի հնար չը կայ։ Միթէ էջմիածնում ամեն բանի մէջ, նոյն իսկ թանաքի մէջ շաբաթ են խառնում։ Բարեհաճեցէք նորից գրել և ուղարկել, իսկ շաբաթով դրածը կարող էք յետ ստանալ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

քերն են, այն Բլանկօյի, որը ներկայումս Կուբայի նահանգապետն է։

Մադրիդը այցելող ճանապարհորդները պատմում են, որ թագաւորական պալատի ամենահնորհալի անձնաւորութիւնը փոքրիկ արքայադուստր Մէրսեդեսն է։ Իր հօր մահից յետոյ թագուհի նշանակվեց, բայց երբ վեց ամիս անցած նրա եղբայրը ծնվեց, քոյրը կրկին զրկվեց իր թագից։ Եթէ եղբայրը մեռնի, Սպանիայի թագը դարձեալ նրան պիտի տրվի։ Պատմում են, որ նա մի պարզ, համեստ աղջիկ է, շիտակ ընաւորութեան տէր. ամենքին յայտնի է նրա բուռն կարեկցութիւնը՝ դէպի իր ժողովրդի աղքատ դասակարգը։ Նրա ծնողքեան տասնեօթերորդ տարեդարձին մի չքեղ պարահանդէս տեղի պիտի ունենար Էսկօրիալ պալատում, բայց արքայադուստրը մերժեց ասելով, որ երկրի այժմեան հանգամանքում խօսք անգամ չէ կարող լինել զուարճութիւնների և պարի մասին։ Նա գերադասեց իր ծննդեան յիշատակը տօնել նրանով, որ ընդունեց Սպանիայի «Կարմիր Խաչի ընկերութեան» նախագահութիւնը։ Ընկերութեան վերակացուներին ընդունեց և յետոյ խօսքն իր մօր և փոքրիկ թագաւորի հետ գնաց Մադրիդի մօտերքում գտնվող մի հիւանդանոց, ուր նա ճաշկերոյթ տուեց Կուբայից և Ֆիլիպինեան կղզիներից վերադարձած վիրաւոր զինուորներին։

Ֆիլիպինեան կղզիները լայնատարած կղզիների մի խումբ են կազմում (31 մեծ կղզիներ, տարիւրաւոր փոքրիկ կղզիներ, ժայռեր ու ապառաժներ) և գտնվում են Մեծ ովկիանոսում, Սիամից և հարաւային Չինաստանից դէպի հարաւարևելք։ Միջնադարեան նաւարկող Ֆերդինանդ Մագէլլանը գտաւ այդ կղզիները, և իր տէր՝ Սպանիայի թագաւոր Ֆիլիպ II-ի անունով Ֆիլիպինեան կոչեց։ Բնակիչները 6 միլիոն են։ Բուսականութիւնը շատ առատ է. երկիրը տալիս է բազմատեսակ արդիւնքներ,—բամբակ, սուրճ, կակաօ, շաքար, արմաւալիւր, ծխախոտ, կանեփ, հնդկացորեն և շատ տեսակ պտուղներ։ Գլխաւոր հանքերն են՝ սաթ, մարմար ու ոսկեփոշի։ Կլիման ընդհանրապէս առողջարար է։

Վերջին տարիները կաթոլիկ եկեղեցին այնպիսի ուժեղ ազդեցութիւն է ձեռք բերել, որ ժողովուրդը բոլորովին ճնշված է քահանաների բռնակալ իշխանութեան տակ։ Երկրի կառավարութիւնը կաթոլիկ քահանաների ձեռքն է, կառավարչական աստիճանաւորները միայն անունով են կառավարում։ Այդպիսի հանգամանքների տակ հառաչող ընիկների մէջ ծագեց ապստամբութեան ոգին և ամեն տեղ տիրում է զանազան կառավարութիւնից ազատվելու փափագը։ Նրանց գլխաւոր դանդատներից մէկը՝ ծնունդները, պսակները և մահվան դէպքերը եկեղեցական գրքերի մէջ մտցնելն է։ Այս գործը ամբողջովին քահանաների ձեռքումն է. քահանան չէ պսակում, եթէ որ ամենաքիչը 60 բուբլի չը ստանայ, և այդ գումարը ընիկների մի տարվայ վաստակի ուկիր կէսն է։ Մկրտութեան համար քահանան առնում է 50 բուբլի և աւելի։ Թաղելու գործում տակսան համապատասխանում է մեռնողի տարիքին. երեխայի թաղման համար վերցնում են 20 բուբլի, իսկ հասակաւորի համար 100 բուբլուց մինչև 120 բուբլի։ Մեռելը չէ թաղվում մինչև դրամը վճարված չը լինի։ Բնիկ քահանաներն ևս, սպանիական քահանաների պէս՝ խիստ հարստահարում են և առնում են այդ գումարները։ Ոչ-հոգևորական սպանիացիները՝ գլխաւորապէս պաշտօնեաներ են, և երբէք չեն օգնում ընիկների վերածնութեան ձգտումներին։

Ինկվիզիցիան չափաւոր ձևով տակաւին ոյժ ունի այդ ժողովրդի վրա։ Դժբաղդ ընիկները ենթարկվում են տանջանքների և՝ ոչ միայն եկեղեցական յանցանքների համար, այլ և ուրիշ գործերի համար. զանազան «մարտիրոսական գործիքներ» դեռ հիմա էլ գործածութեան մէջ են։ Երբ մէկ ընիկ կալանաւորվում է, կասկածվելով որ և է յանցանքի մէջ, այն ժամանակ այդ դժոխային գործիքները ամեն տեսակ խոստովանութիւն դուրս են կորզում նրանից։ Թէ ուսումնարանում և թէ տանը կրթութիւնը մեծ մասամբ քահանաներին է յանձնված։ Երեխաները և երիտասարդները այնպէս են դաստիարակվում, որ աւելի քահանաներին են յարգանք ցոյց տալիս, քան թէ իրանց ծնողներին։ Երբ քահանան մէկ տուն է մտնում, ընտանիքի իւրաքանչիւր անդամը ծունկ պիտի դնէ նրա առջև, և քահանայի ձեռքը համբուրէ։

Ինչպէս ուրիշ տեղեր, Ֆիլիպինեան կղզիներումն էլ կան փոքրաթիւ անձինք, որոնք աւետարանի ազատող զօրութեան համը առել են և հետևաբար բողոքում են պապականութեան վարդապետութեան դէմ։ Բայց նրանք ստիպված են ծածուկ պահել իրանց ներքին համոզմունքը, որովհետև այն կղզիներում կրօնական ազատութիւն տված բանը չը կայ։ Ազգաբնակութեան մեծ մասը անտարբեր է և նուիրված է աշխարհային զուարճութիւններին։ Կարդ է, որ մարդիկ շաբաթը վեց օր գործում են և կիրակին նուիրում են դատարկ զուարճութիւններին և հեշտասիրութիւններին։ Թատրոն, պարահանդէս և ցուլամարտ,—կիրակի օր լի են այցելուներով։

Եւ այդպէս Հօսմը և մնապաշտութիւնը անսահման իշխանութիւն ունեն երկրի մէջ։ Երկիրը տակաւին փակված է Քրիստոսի պատգամաւորների համար։ Մի քանի տարի առաջ Լոնդոնի Միսիոնարական ընկերութիւնը երեք միսիոնարներ ուղարկեց այնտեղ, բայց երբ նրանք հասան և սկսեցին աւետարանի քարոզութիւնը, ամենքին էլ բռնեցին բանտը դրին։ Նրանք դիմեցին բրիտանական հիւպատոսին և այդ վերջինն էլ դիմեց կառավարութեանը, սակայն երկրի օրէնքները թոյլ չեն տալիս, որ որ և է օտար կրօն քարոզվի նրա սահմաններում, և միսիոնարները ստիպված եղան կրկին թողնել և հեռանալ կղզուց։

Պ. Թառայեանց

Дозволено цензурою, Тифлисъ, 15 Іюля 1898 г. Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13